

ՈՐԹԱՏՈՒՆԿԵՐԻ ԵՐԿԻՐ

Հինգերորդ հաղորդում

**Որթատունների երկիր**

Գրվածքների ընթերցում. Փլպ 2:17, Ծնդ 35:14, Բ Տնք 4:6

**I. Որքը զոհաբերվող Քրիստոսի մի նախատիպն է, այն Քրիստոսի, ով Իր ամեն ինչը զոհաբերեց և Իր զոհաբերությունից նոր գինի առաջացրեց՝ Աստծուն և մարդուն ուրախացնելու համար՝ Երկ Օր 8:8, Գտվ 9:13, Սղմ 104:15ա.**

Ա. Քրիստոսը գինի արտադրողն է, ով Իրեն զոհաբերեց՝ Աստծուն և ուրիշներին ուրախացնելու նպատակով գինի արտադրելու համար:

Բ. Որպես որքը՝ Քրիստոսը երջանկացնում է Աստծուն և երջանկացնում ուրիշներին:

**II. Եթե շփվենք Քրիստոսի հետ, ում նախատիպն է խաղողի որքը, և փորձառաբար ապրենք Նրա զոհաբերվող կյանքը, Նա մեզ եռանդուն կղարձնի՝ ապրելու զոհաբերվող կյանքով՝ գինի արտադրելով ուրիշներին և Աստծուն երջանկացնելու համար՝ Հռմ 12:1, Եփս 5:2, Բ Կրթ 1:24.**

Ա. Տիրոջ գերիշխանության ներքո մենք կարող ենք դրվել այնպիսի իրավիճակներում, երբ կարիք կլինի, որ զոհաբերենք մեզ՝ ուրիշներին երջանկացնելու համար՝ Հռմ 12:1, Եփս 5:2.

1. Եթե մեզնից իրավիճակում շփվենք Տիրոջ հետ, փորձառաբար կապրենք Նրան՝ որպես գինի առաջացնող որթի, որպես Նրա, ով երջանկացնում է Աստծուն և ուրիշներին՝ Փլպ 3:1ա:

2. Քրիստոսին՝ որպես որթի, փորձառաբար ապրելու արդյունքն այն է, որ Նրա մեջ, Նրանով, Նրա հետ ու Նրա միջոցով մենք դառնում ենք մի որթ, որն ինչ-որ բան է առաջացնում՝ Աստծուն և մարդուն երջանկացնելու համար:

Բ. Եթե Քրիստոսին փորձառաբար ապրենք Իր համաբովանդակ լինելու այս տեսանկյունից, խմելով շատ գինի կունենանք և Քրիստոսով «հարբած» ու «խենթացած» կլինենք, Տիրոջ ուրախությամբ լցված՝ Հվի 15:11, Գրծ 5:41, 13:52, Փլպ 3:1ա, 4:4:

Գ. Մենք ինքնին ի վիճակի չենք զոհաբերվող կյանքով ապրելու, քանի որ մեր կյանքը բնական կյանք է, եսասեր կյանք՝ Հոր 2:4, Մտք 16:25.

1. Միայն Քրիստոսի կյանքն է զոհաբերվող կյանք:

2. Քրիստոսը՝ որպես զոհաբերվող Գառը, ապրում է մեր մեջ՝ մեզ ուրիշների համար զոհաբերվելու եռանդ տալով, որպեսզի նրանց զվարթացնենք և երջանկացնենք՝ Բ Կրթ 4:12, Եփս 5:2:

3. Եթե շփվենք Տիրոջ հետ ու փորձառաբար ապրենք Նրա զոհաբերվող կյանքը, Նա մեզ եռանդուն կղարձնի և կամրապնդի, որպեսզի զոհաբերվենք հանուն Աստծու և հանուն ուրիշների՝ Հվի 1:29, 20:22, Ա Կրթ 15:45 բ, 6:17, Փլպ 4:13, Հռմ 12:1, Եփս 5:2.

ա. Որքան շատ Քրիստոսին՝ որպես որթի, Իր զոհաբերվող կյանքով

## ՈՒՍՈՒՑՄԱՆ ՈՒՐՎԱԳՐԵՐ

փորձառաքար ապրենք, այնքան շատ զոհաբերվելու եռանդ կունենանք, որպեսզի երջանկացնենք Աստծուն և ուրիշներին:

- բ. Մենք երջանկությունից «հարբած» կլինենք՝ հասկանալով, որ ամենաերջանիկ մարդը նա է, ով ամենաանեսասերն է:
- գ. Մենք երջանկություն կբերենք նրանց, ովքեր շփվում են մեզ հետ, և կզվարթացնենք Աստծուն՝ Բ Կրթ 1:24, 5:13ա:

### **III. Քրիստոսին՝ որպես գինի առաջացնող որթի, փորձառաքար ապրելով ու Նրանով՝ որպես նոր գինով լցված լինելով՝ մենք կարող ենքՆրա մեջ ու Նրա հետ դառնալ հեղման ընծա՝ Ծնդ 35:14, Ելց 29:40-41, Փլպ 2:17, Բ Տմք 4:6.**

Ա. Հեղման ընծան Քրիստոսի՝ որպես այն Անճի նախատիպն է, ով որպես իրական գինին հեղվեց Աստծու առջև Նրա բավարարության համար՝ Ելց 29:40-41.

- 1. Հեղման ընծան հիմնական ընծաների հավելում էր, և այն հեղում էին հիմնական ընծաներից մեկի վրա՝ Թվց 15:1-10, 28:7-10:
- 2. Հեղման ընծայի գինին հեղում էին Աստծու բավարարության համար. այն հեղում էին, որպեսզի Աստված խմեր՝ Ելց 29:40-41.

- ա. Քրիստոսն Իր էությունը հեղում էր առ Աստված՝ Եսյ 53:12:
- բ. Քրիստոսը երկնային, հոգևոր գինին է, որը հեղվում է առ Աստված Նրա բավարարության համար. Նա Իրեն հեղեց որպես գինու, որպեսզի Աստծուն երջանկացնի:

Բ. Հեղման ընծան ոչ միայն հենց Իր՝ Քրիստոսի նախատիպն է, այլև Քրիստոսի, ով մեզ հագեցնում է Իրենով՝ որպես երկնային գինով, մինչև որ Նա և մենք դառնում ենք մեկ, որպեսզի հեղվենք Աստծու հաճույքի ու բավարարության և Աստծու կառույցի համար՝ 9:17, Փլպ 2:17, Բ Տմք 4:6:

- 1. Հեղման ընծան Քրիստոսի՝ որպես երկնային գինու նախատիպն է, ում վայելում է մատուցողը, և ով լցնում է նրան և մղում Աստծու համար գինի դառնալու՝ Փլպ 2:17.

ա. Քրիստոսին՝ որպես ընծաների, փորձառաքար ապրելով՝ մենք դառնում ենք Քրիստոսով լցված ու հագեցած անձինք՝ 3:17, Գղտ 4:19:

բ. Քրիստոսը, ում մենք սուբյեկտիվորեն փորձառաքար ապրում ենք որպես ընծաների, մեր մեջ դառնում է գինի՝ մեզ մղելով երջանիկ և ուրախ լինելու զմայլական վիճակի՝ Մտք 9:17, Բ Կրթ 5:13ա:

գ. Ի վերջո մենք հագեցնում ենք Քրիստոսով՝ որպես երկնային գինով, և գինու հետ մեկ լինում, նույնիսկ գինի դառնում. այսպես մենք որակավորվում ենք հեղման ընծա լինելու՝ Մտք 9:17, Բ Կրթ 5:13ա, Եփս 5:2, Փլպ 2:17:

- 2. Հակոբը Բերելում հեղման ընծա հեղեց սյան վրա՝ ցույց տալով, որ հեղման ընծան Աստծու կառույցի համար է՝ Ծնդ 35:14:

## ՈՐԹԱՏՈՒՆԿԵՐԻ ԵՐԿԻՐ

- ա. Բեթելում հեղված գինին ուղղակիորեն հնձանի գինին չէ. դա գինին է, որ անուղղակիորեն բխում է նրանցից, ովքեր վայելում են Քրիստոսին՝ որպես գինու, և ովքեր հազեցած են Քրիստոսով՝ որպես գինով:
- բ. Բեթելում՝ Աստծու տանը, եկեղեցում՝ որպես Քրիստոսի Մարմնում, մենք ի վերջո պետք է հեղվենք որպես հեղման ընծա՝ Բ Կրթ 12:15ա:

### **IV. Պողոս առաքյալը դարձավ հեղման ընծան, որը հեղվեց սրբերի հավատքի զոհի և ծառայության վրա՝ Փլյա 2:17, Բ Տմբ 4:6.**

- Ա. Փլյա 2:17 և Բ Տմբ 4:6-ի հեղման ընծայի գինին Մտք 9:17-ի Քրիստոսն է (գինին), որը հազեցրել էր Պողոսին ու նրան գինի դարձրել:
- Բ. Պողոսը եկեղեցու համար հեղման ընծա դարձավ. սա ցույց է տալիս, որ հեղման ընծան ոչ միայն Աստծուն երկրպագելու համար է, այլև, հատկապես, Աստծու կառուցման համար:
- Գ. Հիմնվելով այն սկզբունքի վրա, որ հեղման ընծայի համար պահանջվում էր հիմնական ընծա, Պողոսը հավատացյալների հավատքի զոհն ու ծառայությունը դիտարկում էր որպես հիմնական ընծա, որի վրա ինքը կարող էր հեղվել որպես հեղման ընծա՝ Փլյա 2:17.
  - 1. Հավատքն այստեղ ներառում է այն ամենը, ինչ հավատացյալները Քրիստոսից փորձառաքար ապրել ու վայելել են. ի վերջո այն ներառում է այն, ինչ հավատացյալներն իրենք են:
  - 2. Հիմնական ընծան, որի վրա Պողոսը կարող էր իրեն հեղել որպես հեղման ընծա, Փիլիպպեի հավատացյալների հավատքն էր.
    - ա. Չոհր հավատացյալների հավատքն է, ոչ թե հենց հավատացյալները:
    - բ. Հավատքը, խոսքն ու չոզին մեկ են՝ Հռմ 10:17, 8:9:
  - 3. Փլյա 2:17-ի հավատքը Քրիստոսին փորձառաքար ապրելու, վայելելու և շահելու հանրագումարն է.
    - ա. Քրիստոսին փորձառաքար ապրելը, վայելելն ու շահելը դառնում են Աստծուն մատուցված քաղցր զոհ:
    - բ. Քրիստոսին վայելելու միջոցով մենք փորձառաքար ապրում ենք Քրիստոսին, շահում Քրիստոսին և տիրում Քրիստոսին, և մեր էությունը կազմվում է Քրիստոսով. այսպես մեր հավատքը դառնում է զոհ, որը կարելի է մատուցել Աստծուն, և որի վրա կարելի է հեղման ընծան հեղել: